ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Դեկտեմբերի 11-12-ին, 16-19-ին առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ, դեկտեմբերի 20-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև: Տեղումների գումարային առավելագույն քանակը դիտակետերում կազմել է 2-3մմ:

Հանրապետության տարածքում 4-6 օր դիտվել է մառախուղ մինչև 500մ տեսանելիությամբ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է -4.3^{0}C, նորմայից բարձր 2.3^{0}C-ով, Ասկերանում՝ +4.1^{0}C, Մարտունիում՝ +4.5^{0}C նորմայից բարձր 1.2^{0}C-ով և Մարտակերտում՝ +5.6^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 14-ին՝ +15...+18^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտյեմբերի 11-12-ին և 19-ին՝ -1... -4^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -1.... +1^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև +13....+18^{0}C:

Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-2 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 8-12 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 77-89%: